№ 7 (11)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

ЕРЕВАН 2021

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

7 (11)

ԵՐԵՎԱՆ 2021
ЕРЕВАН 2021
YEREVAN 2021

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №7 (11). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2021. – 202 с.

ISSN 1829-4820

Журнал входит в список периодических изданий ***ВАК РА***

ORCID: 0000-0001-9263-6791

© *Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване*

Հասցե՝ ՀՀ, Երևան, Վարդանանց 17, հեռ՝ (+37411) 900 110 – 101, 102:
Наш адрес: РА, г. Ереван, ул. Вардананц 17; тел. (+37411) 900 110 – 101, 102.
Address: Vardanants St. 17, Yerevan, RA; tel.: (+37411) 900 110 – 101, 102.
Էլեկտրոնային փոստ՝ (электронная почта) e-mail: po@msu.am

СЮЖЕТЫ И МОТИВЫ ЭПОСА «ДАВИД САСУНСКИЙ» В РАЗНЫХ ОТРАСЛЯХ ИСКУССТВА И КУЛЬТУРЫ

Вардан Арамович Геворгян
vardangev29@gmail.com

Аспирант Бухарестского государственного университета, Бухарест, Республика Румыния

АННОТАЦИЯ

Народный эпос «Давид Сасунский» стал неиссякаемым источником вдохновения для писателей, представителей различных отраслей искусства и культуры.
В статье представлены разработки эпических тем и мотивов в различных областях искусства и культуры.
Ключевые слова: эпос, памятник, музыка, кинематография, живопись, Е. Кочар, Фресно, Х. Степанян.

Հուշարձաններ

Հայաստանը հարուստ է պատմական հուշարձաններով, առասպելական հերոսների հուշակոթողներով:

Երևանի տարբեր զբոսայգիներում, պուրակներում, փողոցներում կարելի է հանդիպել առասպելական Հայկի, Վահագն Վիշապաքաղի, Վարդան Մամիկոնյանի, զորավար Անդրանիկի, Գարեգին Նժդեհի, Մարշալ Բաղրամյանի և ուրիշ առասպելական ու իրական հերոսների հուշարձանների, բնականաբար, նաև Սասունցի Դավթի, ում նկատմամբ հայ ժողովուրդն առանձնակի սեր ու վերաբերմունք ունի:

Սասունցի Դավթի լավագույն հուշարձանը՝ 6.5x2.2x9.3 մետր, կառուցված բրոնզից ու բազալտից, վեր է խոյանում Երևանի կայարանամերձ տարածքում:

Հուշարձանի հեղինակը հանրահայտ նկարիչ-քանդակագործ Երվանդ Քոչարն է, ով ցուցահանդեսներ է ունեցել աշխարհի շատ երկրներում: Հուշարձանի կառուցման գաղափարը ծագել է 1939-ին, երբ նշվում էր էպոսի 1000-ամյակը: Այդ օրերին հայտարարվեց մրցույթ, որին շատերը հրաժարվեցին մասնակցել՝ սեղմ ժամկետում աշխատանքն ավարտելու անհնարինության պատճառաբանությամբ: Այդ ծանր գործին ձեռնամուխ եղավ Երվանդ Քոչարը, ով ընդամենը 18 օրում ավարտեց աշխատանքը, և հուշարձանը վեր խոյացավ Երևանում: Դաժան ճակատագիր էր բաժին ընկել թե հուշարձանին և թե Ե. Քոչարին. 1941թ. «ժողովրդի թշնամի» Ե. Քոչարը ձերբակալվեց, իսկ հուշարձանը տեղահանվեց ու ոչնչացվեց: Հեղինակին առաջադրվող ծանր մեղադրանքներից մեկն էլ այն էր, որ «մերկացրած սրով հեծյալը նայում է դեպի մեր բարեկամ Թուրքիա»:

1957թ. հուշարձանը նորից գտավ իր տեղը: Ծանր ժամանակներ էին, և ամեն կերպ փորձ էր արվում հուշարձանի բացումն անել աննկատ: Սակայն դա չհաջողվեց: Բացումը վերածվեց համաժողովրդական տոնակատարության: Ականատեսների վկայությամբ կայարանամերձ հրապարակի տարածքում հավաքվել էին տասնյակ հազարավոր մարդիկ, նաև հյուրեր տարբեր երկրներից: Քաղաքի փողոցներում իսկական տոնախմբություններ էին. ամենուր բացվել էին ճոխ սեղաններ, պատշգամբներից Սասնա ծռերի պատկերներով գորգեր, ասեղնագործության այլ նմուշներ էին կախված, հնչում էին Սասնա երգեր, պարային համույթները կատարում էին Սասնա պարեր:

Բացի Երևանից, Սասունցի Դավթի արձան տեղադրված է նաև աշխարհի մի շարք երկրներում, որտեղ կան հայկական գաղթօջախներ. դրանց մի մասը հայրենիքի նվերն է օտարության մեջ ապրող իր զավակներին, մի մասը կառուցվել է հանգանակությամբ:

Արտասահմանյան արձաններից լավագույնը, թերևս, Ֆրեզնոյում կանգնեցված հուշարձանն է՝ Քուռկիկ Ջալալին հեծած Դավիթը սավառ-

նում է դեպի հայրենիք: Հուշարձանը (հեղինակ՝ Վարազ Սամվելյան) տեղադրվել է 1971 թվականին: Պատրաստված է ձուլածո պղնձից և հայրենիքի նվերն է Ֆրեզնոյի հայկական համայնքին: Հուշարձանը կառուցվել է «Ամերիկայի Հայկական Համագումարի» նախաձեռնությամբ՝ ամերիկահայ բարերարների ֆինանսական աջակցությամբ, շարքային ամերիկահայերի հանգանակություններով:



Սասունցի Դավթի արձանը Ֆրեզնոյում (Կալիֆորնիա)

Երվանդ Քոչարի հոյակերտ արձանը մեծ հաջողությամբ ընդունվեց նաև ԽՍՀՄ տարբեր հանրապետություններում: ԽՍՀՄ կենտրոնական բանկի կողմից շրջանառության մեջ դրվեց հինգ ռուբլիանոց մետաղադրամ, որի դարձերեսին Սասունցի Դավթի հուշարձանն է, 1993թ. անկախ Հայաստանի բանկը շրջանառության մեջ դրեց 10 դրամանոց արժույթ, 1968թ. ԽՍՀՄ կենտրոնական փոստը շրջանառության մեջ դրեց Սասունցի Դավթի հուշարձանի նկարով նամականիշ:



«Սասունցի Դավիթ» արձանը խորհրդային մելքիորե հուշադրամի դարձերեսին (1991թ.)



Սասունցի Դավթի հուշարձանի նկարով նամականիշ (1968թ.)



Հայաստանի բանկի կողմից շրջանառության մեջ դրած
10 դրամանոց արժույթ (1993թ.)

Երաժշտության մեջ և կինեմատոգրաֆիայում

Շուշիի ազատագրման 25-ամյակի կապակցությամբ առաջին անգամ քաղաքի ռեալական ուսումնարանի բացօթյա տարածքում կայացավ «Սասունցի Դավիթ» օպերայի պրեմիերան: Այն նվիրված էր նաև կոմպոզիտոր Հարո Ստեփանյանի ծննդյան 120 և հայ անվանի գրող Դերենիկ Դեմիրճյանի 100-ամյակներին:

Արցախյան պրեմիերան համախմբեց հազարավոր ունկնդիրների աշխարհի տարբեր երկրներից: Արձագանքները չուշացան. Օպերայում առկա է ասերգային նոր ոճ, որը սերում է հայ գուսանների վերամբարձ երաժշտական արտասանությունից: Նոր ոճի այս հերոսական օպերան նշանավորում է հայկական օպերային արվեստի զարգացման նոր փուլ: Օպերան աչքի էր ընկնում նաև ժամանակին յուրահատուկ կոլորիտով, հատկապես գործող անձանց հագուստների յուրօրինակ ոճով:

Պրեմիերան կազմակերպվեց արտասահմանյան երաժիշտների մեծ խմբի և Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի դերասանների մեծ խմբի ջանքերով: Արտասահմանից հրավիրվածների թվում էին դիրիժոր Սուրեն Շահինյանը (Ֆրանիսիա), ռեժիսոր Արմեն Փիրի Մասիհին (Իրան), խորեոգրաֆ Արսեն Մեհրաբյանը (Շվեդիա), Դավթի դերակատար Մկրտիչ Բաբախանյանը (Գերմանիա), դերակատարներ Ամերիկայի Միացյալ Նահանգներից և եվրոպական այլ երկրներից:

Հ. Ստեփանյանի «Սասունցի Դավիթը» ավանդական օպերա չէ, և մասնագետներին ավելի շատ հետաքրքրել է իր ինքնատիպ մեկնաբանություններով, կերպարակերտման յուրահատկություններով: Օպերայի դերասանները, հատկապես Դավիթը, շատ են տարբերվում «Սասնա ծռեր»ի կերպարներից: Էպոսում Դավիթը ատլետիկ կազմվածքով, Քուռկիկ Ջալալին հեծած, Թուր Կեծակին մերկացրած առասպելական հսկա է, օպերայում նա ազատատենչ, նուրբ հոգու տեր անձնավորություն է և Մսրա Մելիքին հաղթում է ոչ թե իր ֆիզիկական, այլ աստվածային ուժի ու հնարամտության շնորհիվ: Դավիթն օպերայում ներկայացվում է որպես համամարդկային վեհ գաղափարների ջահակիր և ունկնդիրներին հմայում է հենց այդ տեսանկյունից:

Էպոսի թեմաներով նկարահանվել են լիամետրաժ ֆիլմեր, որոնցից լավագույնը, թերևս, 2000-ականներին նկարահանված «Ճանապարհ դեպի Սասունցի Դավիթ» ֆիլմն է: Վ. Վարդանի նովելների մոտիվներով նկարահանված այդ ֆիլմը մի տղայի մասին է, ով ձգտում է նմանվել էպոսի Դավթին: Տղայի անունը նույնպես Դավիթ է, և նա զօրուգիշեր երազում է նմանվել իր նախանախապապին, լինել նրա պես քաջ ու անվախ, նաև անչափ բարի, բոլոր երեխաների համար սիրելի:

Ծնողներից թաքուն նա շրջանից գալիս է Երևան և հասնում Սասունցի Դավթի արձանի մոտ: Սասունցի Դավթի դերակատարը ծանրամարտի աշխարհի բազմակի չեմպիոն, բազմակի ռեկորդակիր, լեգենդար Յուրի Վարդանյանն է:

Ֆիլմի ռեժիսոր Արմեն Վանթյանը գրում է, որ երբ ֆիլմը ցուցադրվել է ուկրաինական մի փառատոնում, անմիջապես ձայնագրվել է նաև ուկրաիներենով. «Մեզ ասացին, որ Ուկրաինայում երեխաներին հայրենասիրական ոգով դաստիարակող կինոնկարի պակաս կա, և այդ բացը ուզում էին լրացնել մեր ֆիլմով»:

«Ճանապարհ դեպի Սասունցի Դավիթ» ֆիլմը ցուցադրվել է նաև եվրոպական մի շարք երկրներում: Երկար ժամանակ այն չէր իջնում ԱՄՆ հայաշատ գաղթօջախների էկրաններից:



«Ճանապարհ դեպի Սասունցի Դավիթ»



«Սասունցի Դավիթ» գրաֆիկական կոմպոզիցիա (1922թ.)

Գեղանկարչության մեջ

Գեղանկարչական բազմաթիվ ստեղծագործություններ են ստեղծվել «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոսի թեմաներով, որոնցից լավագույնն, անշուշտ, Հակոբ Կոջոյանի 1922 թվականի ստեղծած կտավն է:

Նկարն ունի 47 սմ բարձրություն, 58 սմ լայնություն: Նկարի հիման վրա ստեղծված տուֆակերտ որմնաքանդակը գտնվում է Գաֆեսճյան արվեստի կենտրոնի «Սասունցի Դավիթ» սրահում (քանդակագործ՝ Արտաշես Հավսեփյան):

Կոմպոզիցիայի կենտրոնում Սասունցի Դավիթն է՝ Քուռկիկ Ջալալին հեծած, Թուր Կեծակին ձեռքին: Շուրջը զետեղված են էպոսի երրորդ ճյուղի թեմաներով նկարազարդումները՝ գառնարած Դավթի մանկությունը, Կոզբադինին պատժելու տեսարանը, հաշվեհարդարը Մսրա Մելիքի հետ: Թերթի ներքին տարածությունն ամփոփված է մանրանկարային գրաֆիկական պատկերների երկրորդ շարքի մեջ, որ ասես էպոսի ժամանակային ֆոնն են կազմում՝ Սասնա ամրոցի պարիսպները, Մա-

րութա վանքը, առանձին հերոսների կերպարներն ու դրվագավոր գլխազարդեր: Դրանք ստեղծված են պաստոզային մեղմ գամմայով:

Կոջոյանի «Սասունցի Դավիթն» աչքի է ընկնում համակարգի գեղարվեստական ամբողջականությամբ: Ակվարելային հստակ ուրվանկարը զուգորդվում է ներքին գունային ռիթմի հետ, որ միավորում է կտավի բոլոր մասերը:

«Սասունցի Դավիթ» էպոսի մոտիվների ու թեմաների մշակումները արվեստի ու մշակույթի տարբեր բնագավառներում ունեն ճանաչողական ու կրթադաստիարակչական մեծ նշանակություն հատկապես Սփյուռքի մեր հայրենակիցների համար:

ЛИТЕРАТУРА

1. *Կոջոյան Հ.* Ալբոմ: – Եր., 2008:
2. Հայ գրականություն սփյուռքի դպրոցների համար: – Եր., 2016:
3. Հայկական հանրագիտարան, հ. 11: – Եր., 1962:
4. Հայկական հանրագիտարան, հ. 14: – Եր., 1963:
5. «Սասունցի Դավիթ» (Հայ ժողովրդական հերոսավեպ): – Եր., 1981:
6. *Սոմանդ Ժ., Գոռուժո Ժ.* Ծուռ Դավիթ: – Եր., 2016:
7. «Քրիստոնյա Հայաստան», Հանրագիտարան: – Եր., 2001:
8. *Քոչար Ե.* Ալբոմ: – Եր., 2002:

«САСУНЦИ ДАВИД» ЭПОСА ТЕМАТИКА И МОТИВЫ ИСКУССТВА И КУЛЬТУРЫ ДИАСПОРЫ

В.А. Геворгян

vardangev29@gmail.com

Бухарестская государственная консерватория аспирант,
Бухарест, Румыния

ԱՄՓՈՓՈՒՄ

«Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսը ոգեշնչման անսպառ աղբյուր է հանդիսացել գրողների, արվեստի և մշակույթի տարբեր ճյուղերի ներկայացուցիչների համար:
Հոդվածում ներկայացնում են արվեստի և մշակույթի տարբեր բնագավառներում էպոսի թեմաների և մոտիվների մշակումները:
Բանալի բառեր՝ Էպոս, հուշարձան, երաժշտություն, կինոմատոգրաֆիա, գեղանկարչություն, Ե.Քոչար, Ֆրեզնո, Հ. Ստեփանյան:

PLOTS AND MOTIVES OF THE EPIC «DAVID OF SASUNSKY» IN DIFFERENT BRANCHES OF ART AND CULTURE

V. Gevorgyan
vardangev29@gmail.com

Postgraduate student at Bucharest State University, Bucharest, Republic of Romania

ABSTRACT

The folk epic «David of Sasun» has become an inexhaustible source of inspiration for writers, representatives of various branches of art and culture.
The article presents the development of epic themes and motives in various fields of art and culture.
Keywords: epos, monument, music, cinematography, painting, E. Kochar, Fresno, H. Stepanyan.

Информация о статье:
статья поступила в редакцию 13 сентября 2020 г.,
подписана к печати в номер 7 (11) / 2021 – 28.03.2021 г.